

դուց վճռել ենք հետեւել «Хлеб-соля хлеб-правду рѣжь» համակրելի սկզբունքին, եւ որքան մեր ուժերն եւ ժամանակը ներուժ են՝ քննադատել մեր դաւաճական գործերը, երեւոյթները եւ այլն:

Այս անգամ մասնաճիւղ ենք անում մեր քաղաքում տիրող խնամքի բացակայի եւ թայֆայակ անուրի թեւան վրաս:

Մեր քաղաքի հասարակական գործերը, ինչպէս շատ ուրիշ տեղերում, գտնվում են արեւմտեական տեսակետից միջին եւ, մեծ մասամբ, բարձր դասակարգի ձեռքին: Թէեւ այդ գործերը, բարեգործական, շատ հետեւ են մենաշնորհ դաժնալուծ, բայց որովհետեւ մեր նիւթային բարձր դասակարգը, — առեւտրով պարագայ մի 20—30 ազդեցիկ ընտանիք, — մի փոքրիկ կատա Կամ աւելի ճիշդ՝ մի թայֆա է կազմում, որի անդամները շատ սերտ կերպով կապված են միմեանց հետ ազգայական եւ խնամքի կապերով, եւ այդ կապերի ցանցը օր-օրի վրա խտանում է, որքան թոյլ են տալիս «հաս ու չընտանեան» համայնականները, — այդ պատճառով էլ ընտրողական եւ հաշուաւորական համակարգի սկզբնական եւ հաշուաւորական համակարգի սկզբնականները եւ այն բոլոր գործերը, որտեղ հասարակական խիստ, անողորմ եւ անաչառ քննադատութիւն է պէտք, գտնվում են խնամքի թեւան զգուշիկ սկզբունքին: Այդ թայֆային պատկանողները կամ կուրանում եւ անտարբեր են գտնվում դէպի բացարձակ զեղծումները, կամ սեւ նախանձից՝ պառակտական բամբասանքներով ուղարկում են վնասել ամեն մի համակարգի գործի, եթէ այդ գործի նախաձեռնողները իրանց երջանիկ կատարյալ դուրս են: Պատահում է եւ այնպէս, որ այդ թայֆան բաժանվում է մասերի, եւ ամեն մի խումբ՝ հետեւելով ճիշդագործական բոլոր կանոններին եւ օրէնքներին՝ պաշտպանում կամ հետեւում է իր աւելի մեծ ազգայնական կամ խնամքի: Պատահում են եւ այնպիսի դէպքեր, որ մեր քաղաքացիներ, ազգայական կապեր ստեղծելով մի այնպիսի մարդու հետ, որին առաջ անխնայ, շատ անգամ անարդարացի, մարտկում էր անձնական հաշիւների պատճառով, սկսում է հին կուռքերը վարդել, նոր կուռք է ստեղծում իր ատած մարդուց եւ զենքը դարձնում է դէպի մի ուրիշ կողմ: Ամեն անգամ, երբ մեր հասարակութեան անդամը պէտք է իր ձայնով մի որ եւ է հասարակական գործ որոշէ, ընտրութիւն անէ կամ որ եւ է հաշիւ ստուգէ, նա սկզբից իր մտքում այդ գործերի հետ առնչութիւն ունեցող մարդկանց, ինչպէս ասում են, «պորտ-պորտ է անում»՝ ճիշդագրական ձեւերով ու ապա այդ «պորտերով» առաջնորդվելով իր վճիռը տալիս: Ուրեմն մեր հասարակական գործերը հիմնվում են ոչ թէ խղճի, համագործակցի, արտի թելադրութեան,

առի կաթոլիկ եւ բողոքական միութենաների դպրոցները կարողացել են զբաւել հայ մանուկներին բազմութիւն:

Եւ էլ միայն, որը առանձնակ տարիներով լուռ եւ անտարբեր հանդիսատես էր հայազգային դպրոցների անախնայանքի եւ ողորմելի վիճակին, անտես էր անում Թէհրանի եւ Թաւրիզի հոգաբարձութիւնների դիմումները, բողոքները, առաջարկները կրթական գործի եւ առաջնորդների զեղծումների վերաբերմամբ, ոչ մի միջոց ձեռք չէր անում չէզոքացնել, անդամալուծել կաթոլիկ եւ բողոքական դպրոցների ազդեցութիւնը, հարկ է համարել այսօր — երբ ժողովուրդը, մի խումբ ինտելիգենտ անձերի ձեռքով, ձեռնարկել է ժողովրդական կրթական գործը կազմակերպել, հաստատ հիմունքների վրա դնել ու զարկ տալ պարսկահայերի մտաւոր կեանքի զարգացման — կրթական նոր առաքանքներ ուղարկել եւ խոչընդոտ հանդիսանալ գործին, ներհնչելով իր ներկայացուցիչներին ձեռքով այս եւ այն տկարամիտ հոգաբարձութեան, թէ հրատարակված նոր ծրագիրը կարող է վտանգի ենթարկել ազգային շահերը, այսինքն առաջնորդների եւ Նոր-Ջուղայի վանականների շահերը:

Ուր էլ, արեւադան հայեր, մեծաշնորհ վարդապետներ, արեւելահայ, միջին եւ այսօր, ինչպէս անգործ նստած էլք 60—70 տարի եւ այսօր միայն հարկ համարեցիք գործունէութիւն ցոյց տալ, այն եւս բացասական, ձգտելով անդամալուծել այն յանձնաժողովի անդամները եւ եռանդը, որ իրան նպատակ է դրել կատարել այն, ինչ որ էլ միայնակ զրաջալ կատարել միջին եւ այսօր: Այսօր, երբ ժողովուրդը կամենում է ինքն գործել, դուք զայրանում էք եւ զրդում Նոր-Ջուղայի հոգաբարձութիւնը, որի նախագահն է թեմակալ եպիսկոպոսը, բողոքել Թէհ-

րանի զեղծի դատողութեան, այլ ինչ որ... «պորտ-պորտ» վրա. նրանք միշտ պտտվում են «սա-նախար-կընդայններին», խնամքների եւ փեսաների շուրջը...

Սակայն անցել են այն երանելի ժամանակները, երբ «հաշիւ-աղաները», առաւելական հիդրոյի նման՝ քանում էին ժողովուրդի արիւնքը, հարստահարում էին նրան ոչ միայն նիւթային, այլ եւ բարոյապէս. դրանց մնացորդները հիմա՝ յարմարվելով ժամանակի պահանջներին՝ ձգտում են դուրս գալու իրանց կախարչված չրջանից: Բայց եւ այնպէս երբեմն այդ «աղաներին» որդիները, եւրոպական յաւակնութիւններով, փոքրիկ ու կոկիկ այդ բուրժուաները ձգտում են խաղալ նոյն դերը, ինչ որ իրանց լուսահոգի հայերն են խաղացել, միայն ուրիշ գրոյակի անունով... Ճիշդ է, այդ փոքրիկ դասակարգը աչքի ընկնող նիւթային գործարարութիւններ է անում հասարակական ասպարէզում, որ եւ չէ ուրանում բուն ժողովուրդը, բայց ձիւղ է եւ այն հանահամբեր, որ մեր «աղաներին» նոյն իսկ նոր սերունդը «համը տարել է» իր խնամքական վերաբերմունքով դէպի հասարակական գործը: Ժողովուրդը սկսել է նկատել այդ տղեղ եւ ինտելիգենտ Բայց նկատելով բաւական չէ՝ պէտք է գիտակցաբար վերաբերվել դէպի ընտրողական սկզբունքը, պէտք է՝ ազատ որ եւ է արտաքին ազդեցութիւնից՝ իր խղճի արտայայտիչ, իր ձգտումներին ներկայացուցիչ ընտրել եւ իրազօրութիւն տալ բուն ժողովուրդի այնպիսի մարդկանց, որոնք ընդունակ չեն ի չարք գործ դնելու ժողովուրդի վտանգութիւնը եւ որոնք, զէթ թոթովելով, կարող կը լինեն նրա իսկական ցանկութիւնների անկեղծ արտայայտիչը եւ շահերի արթուն պաշտպանը լինել:

Սալլիւմեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Վերին-Աղղան, մարտի 13-ին
Մեր հասարակութիւնը դիմել էր բժշկապետ պ. Յ. Գասպարեանին մեր գիւղի երկու թաղերը միացնող կամրջի շինութեան համար: Այսօր ստացանք պ. բժշկապետ Գասպարեանից մէկ հարկւր բուրձի, որի համար հասարակութիւնը յայտնում է նրան իր խորին շնորհակալութիւնը: Յուշով ենք, որ յարգելի բժշկապետ օրինակին կը հետեւեն եւ այն հարուստները, որոնց դիմել ենք այդ նպատակով:

Վերին Աղղանի պատգամաւոր՝ Աթաբէգ Միլիթեանից ենք, նոյն գիւղի երէցփոխներ՝ Յակոբ Արզումանեանց, Ոսկան Բէգ-նազարեանց:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Վաղարշապատ, մարտի 8-ին
Վաղարշապատի թատերասէրների խումբը

Բանի յանձնաժողովին հրատարակած ծրագրի դէմ, բարձրով նրա վրա զանազան գիտակցական եւ անգիտակցական յանցանքներ, որոնց թուում եւ այն, որ յանձնաժողովը իրան մեղաւոր էր դարձրել «Մշակ» լրագիրը եւ չէ բարեհաճել հերքել միջին եւ այսօր նրա «աղալ» առաջնորդող յօդուածը (տես Մշակ, 1900 թ. № 242), որ ձգտում էր ցոյց տալ, թէ ծրագիրը հաստատված է Շահին եւ այդ համարում է նշանաւոր երեւոյթ պարսկահայերի համար:

Ի նկատի ունենալով, որ Նոր-Ջուղայի հոգաբարձութեան ընթացքը նպատակ ունի խնդարել մի գործ, որի կարեւորութիւնը ամեն կողմից ճանաչվեց, եւ ոչ միայն ուսումնական, այլ եւ արտասահմանեան հայ մամուլը եւ նոյն իսկ ուսաց ու եւրոպական մամուլը խրախուսանքով խօսեց նրա մասին, համարելով Մուզաֆէր Էլզէրին Շահի տուած ֆիրմանը իրեն մի նշանաւոր երեւոյթ պարսկահայ ժողովուրդի կեանքի մէջ, երեւոյթ, որ զարեղույն պէտք է կազմել նաեւ Պարսկաստանի պատմութեան մէջ, եւ, իբրեւ մէկը ծրագիր խմբագրողներից եւ Շահի ֆիրմանը ձեռք բերելու աշխատողներից, բարոյական պարտաւորութիւն եմ համարում թէ անհատապէս եւ թէ յանուն եւ ի կողմանէ պարսկահայերի նախաձեռնող կրթական յանձնաժողովի մի քանի բացատրութիւններ եւ տեղեկութիւններ տալ հայ հասարակութեան այն սկզբունքներին մասին, որոնցով յանձնաժողովը զեկակարգվել է ծրագիրը կազմելու եւ այն նպատակի մասին, որ նա որոշել է իրագործել:

Քառասուն, յիսուն տարի առաջ, երբ Պարսկաստանը դեռ շատ քիչ չլիման մէջ էր Ռուսաստանի եւ Եւրոպայի հետ, երբ եւրոպական ազգերի եւ գլխաւորապէս Ռուսաստանի ու Անգլիայի տնտեսական ու քաղաքական մրցութիւնը չօշափելի կերպով չէր արտայայտվում,

յունվար եւ փետրվար ամիսներում տուեց բարեգործական նպատակով երկու ներկայացում, առաջինը տղայաց երկրպագան դպրոցի, իսկ միւսը չքաւոր եւ կարօտ ընտանիքների օգտին: Երկու ներկայացումներից միասին գոյացաւ 142 բուրձի 50 կոպէկ, որից դուրս գալով երկու ներկայացումների ժամանակ կատարված 54 բուրձի 51 կոպէկ ծախքը, զուտ արդիւնք մնաց դպրոցի օգտին եւ յանձնվեց դպրոցի վարչութեանը 37 բուրձի 43 կոպէկ, իսկ չքաւորների օգտին մնաց 50 բուրձի 56 կոպէկ, որը դաւառի պ. կառավարչի կարգադրութեամբ բաժանվեց չքաւոր ընտանիքներին՝ հասարակութեան տնտեսւթիւնը եւ ուրիշներին միջոցով:

Տպագրելով այս հաշիւը, թոյլ տուէք ձեր լրագրի միջոցով յայտնել մեր խորին շնորհակալութիւնը, առաջին՝ Երեւանի նահանգական վարչութեան խորհրդական պ. Սամսոն Տէր-Իսահակեանին, որը Վաղարշապատում ունեցած իր դաշինքը երկու յարակից սենեակներին հետ միասին ձրիաբար դրեց թատերասէրների տրամադրութեան տակ միջին ամառը ներկայացումներ տալու: Երկրորդ՝ էլ միայն մայր աթոռի տպարանական վարչութեանը, որ երկրորդ ներկայացման յայտարարութիւնները ձրիաբար տպագրեց եւ երրորդ՝ բոլոր այն անձանց, որոնք առանց վարձատրութեան եւ միմիայն բարեգործական նպատակ ի նկատի ունենալով՝ աշակցեցին սիրողներին ներկայացման ժամանակ:

Սիրողների խմբի կողմից՝ Ա. Օհանջանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ Անդրկովկասի շատ տեղերում բուսականութիւնը արդէն սկսել է զարգանալ եւ մրցատու ծառերի մի մասը արդէն ծաղկել է: Եթէ ցրտեր եւ օդերեւոյթաբանական դժուարանքներ չը խանգարեն բուսականութեան կանոնաւոր աճման, այս տարի բերքը կարող կը լինի շուտ հասնել:

Մեզ հաղորդում են, որ ներկայումս պատարաստվում են եւ միաժամանակ տպվում կովկասի պատմութեան վերաբերալ մի քանի աշխատութիւններ: Այդ աշխատութիւնները պէտք է լոյս տեսնեն տարվայ ընթացքում եւ նուիրված կը լինեն ուսաց տիրապետութեան հարիւրամեակին Վրաստանում:

Թիֆլիսի այգեգործական դպրոցի աշակերտները այս տարի սովորական ժամանակից աւելի վաղ արձակվեցին զատական տօների համար: Դպրոցի վարչութիւնը, կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան հետ միասին, պէտք է մի քանի նիստեր նուիրէ այս օրերս դպրոցի բարեւոյթին եւ նրա ապագայ կազմակերպութեան հարցին:

Մեզ հաղորդում են, որ առաջիկայ շաբաթ

հայերը Պարսկաստանում բաւական աչքի ընկնող դեր էին կատարում եւ վաճառականութիւնը մեծ մասամբ հայերի ձեռքումն էր: Սակայն Պարսկաստանի միջազգային յարաբերութիւնները զօրեղանալով, հաղորդակցութեան միջոցները հեղափոխվել, Եւրոպայի հետ չլիման աւելի լայն ծաւալ ստացաւ. եւրոպացիները մուտք գործեցին Պարսկաստան, առեւտրական յարաբերութիւններ սկսեցին, զանազան հաստատութիւններ հիմնարկեցին եւ արեւմտեան Պարսկաստանը նուաճել տնտեսապէս ու իրանց ձեռքը գցել երկրի առեւտրը եւ արդիւնաբերութիւնը: Մասնաւոր անցնող դարի ութսունական թվականներին տիրապետող դիրքը եւ կշիռ ստացան անգլիացիները, իսկ անցնող դարի վերջերին գերակշռութիւնը անցաւ Ռուսաստանին եւ ուսական ազդեցութիւնը, թէ քաղաքական եւ թէ տնտեսական, այժմ գերակշռողն է Պարսկաստանին: Այդ ընդհանուր մրցման մէջ հայեր, ի հարկ, շատ բան կորցրին, որովհետեւ անպատրաստ էին քաղաքակրթապէս, բայց մի եւ նոյն ժամանակ թէ եւրոպացիները, թէ ուսմանը տեսան եւ համոզվեցին, որ հայ տարրը շատ լաւ կարապետ (avant-garde) է եւրոպական քաղաքակրթութեան եւ առեւտրի համար Արեւելքում եւ առանց հայերի օգնութեան դժուար է գործ կատարել: Բազմաթիւ հայ երիտասարդներ գործ եւ պաշտօն գտան անգլիական եւ ուսաց բանկերում եւ զանազան հաստատութիւնների մէջ: Հայերը պարզ տեսան, որ մրցութեան եւրոպացիների հետ այնքան էլ դժուար չէ: Եթէ իրանք եւս յարմարվեն ժամանակի պահանջներին, սովորեն լեզուներ, արուեստներ, զանազան մասնագիտութիւն, միւս կողմից՝ դարբնով քնած պարսիկները, ժամանակի եւ եւրոպական քաղաքակրթութեան ու մրցութեան հոսանքի ազ-

օր, Թիֆլիսի արտիստիքական թատրոնում Գ. Կարա-Մուրզայի պարաստած խումբը կը տալ «Համերգ», կազմված հայ ժողովրդական երգերից, պարերից եւ պարերից: «Շուշան» օպերայի նախերգանքի մէջ Բուլատ-Բէգի պարտիան հայերէն կերպէ վրացի երգիչ Գ. Յիւսմիլիձէ:

Մօտ օրերում, «НОВОСТИ» լրագրի ասելով, Պետերբուրգ կը հասնեն Վաղարշապատից երկու վագօն լի չինական գրքերով, որոնք կազմում էին Մուկէշի նշանաւոր գրադարանը: Գրքերը կը գետնողվեն գիտութիւնների ակադեմիայում:

Ֆինանսների մինիստրութիւնը ներկայացնում է պետական խորհրդի ընտելութեանը մի օրինադիւ, որով Պետերբուրգում պէտք է հիմնվի արդիւնագործական գիտութիւնների ինստիտուտ: Նրա հիմնադիրն է իշխան Տենիշևի, որը եւ պէտք է այդ ինստիտուտի գիտական լինի միջին մաս: Թիւեալ դպրոցը կը գտնվի ֆինանսների մինիստրութեան ուսումնական բաժնի իրաւասութեան տակ: Ինստիտուտում իրանց ուսման ընթացքն աւարտող երիտասարդները չեն ունենայ ոչ մի արտօնութիւն:

Կիւմլի քաղաքային խորհուրդը, ի յիշատակ ձորների ազատութեան քառասունամեակի, որոշել է արձան կանգնեցնել Ալէքսանդր II Կայսրին եւ հիմնել ժողովրդական տուն:

ԵՐԵՎԱՆԻՑ մեզ գրում են. «Մեր քաղաքի նորակառուց եկեղեցին, շնորհիւ իր ներքին զեղեցկութեան, բաւական ժամանակներ է գրաւում, չը նայելով որ միջին այժմ ծխականներ չունին: Նոր եկեղեցի, նոր սարք ու կարգ: Բայց աւելի աչքի է ընկնում նոր ձեւի երէցփոխութիւնը: Մի երիտասարդ ուսուցիչ, պ. Պօպով, երէցփոխ ընտրվելով, չը խնայեց ոչ մի ջանք նոր եկեղեցուն համար, չը նայած իր դէմ սարքած խոչընդոտներին, եւ վերջում էլ առանձին գրքովով հասարակութեանը տուեց եկեղեցուն ութամսեայ հաշիւը: Սպասում ենք, որ այդ մի լաւ օրինակ կը լինի մեր միւս երէցփոխների համար, որոնցից մի քանիսը հաշիւ տալու սովորութիւն չեն ունեցել միջին այժմ»:

ԱՆԱԼԻՍԱՒԻՑ մեզ գրում են. «Մարտի 8-ին, երեկոյան ժամը 8-ին, մի օրճայի, Արեւեան ազգանունով, քաղաքից դիւր լու ժամանակ, երբ ալիւրը չալակած անցնելիս է եղել քաղաքի մօտ հոսող Թափարկան գետի ձորով, ոտքը դուրս է պրծել, եւ խեղճ ժայռից ընկել ու մեռել է: Մի քիչ առաջ ան-

դեցութեան ներքոյ, սկսեցին զարթնել, սեփական զգրոցներ բանալ, պարսիկ երիտասարդներին ուղարկել Եւրոպա ուսման եւ կրթութեան համար, լրագիրներ հրատարակել: Անշուշտ հայերը, եթէ կամենում են հոսանքից չը տարվել եւ չը ջնջվել, ինչպէս ջնջվեցին Հնդկաստանում, պէտք է մտածէին նոյնպէս իրանց մատող սերնդի կրթութեան մասին եւ հաւ շատ ընտանիքներ սկսեցին իրանց զաւակներին ուղարկել Եւրոպա, Ռուսաստան ուսման համար: Բայց հայ ժողովուրդի մեծամասնութիւնը Պարսկաստանում, չը լինելով նիւթային արդիւնաբեր, չէ կարող իր զաւակներին ուղարկել ուսման համար Եւրոպա եւ Պարսկաստան, ինքն եւս չունի սեփական բարեկարգ եւ կեանքի պահանջներին գոհացում տուող զգրոցներ: Ժամանակ էր մը տաճել հայ ժողովրդական կրթական գործը կազմակերպել հաստատ հիմունքների վրա, բանալ մի քանի միջնակարգ ուսումնարաններ, որոնք մատակարարելով հայ պատանուն ժամանակի ոգուն եւ երկրի պահանջներին համապատասխան ընդհանուր եւ մասնագիտական ուսում, միջոց տալին նրան մրցել, դեր խաղալ իր հայրենիքի կեանքում եւ նիւթային, տրեստապէս, բարոյապէս ու մտաւորապէս բարգաւաճել, մասնաւոր որ պարսից կառավարութիւնը հաճութեամբ քաջալերում է հայերի քաղաքակրթական ձգտումները, այն համոզմունքով, թէ հայ տարրը Պարսկաստանում, իր հաւատարմութեան ապացոյցներ շատ անգամ տուած լինելով, կարող է գիմարել եւրոպացիների ձգտման տնտեսապէս նուաճել Պարսկաստանը:

(Ըր շարունակվի)

ցած ընկերները վերագրանում են իրանց ուղեկցի մանչևսյան գիտնական Գրեյսին, որ եւ ժամը 9—10-ին բերին քաղաք։ Այսօր անբաղդ գիւղացու դիակը տարան Օրճա։ Սովալլուկ ընտանիքի հայրը եկել էր քաղաք կոմիտեից ալիւր տանելու, որ ընտանիքը սովամահ լինելուց ազատէ։ Բայց թշուառները ալիւրի փոխարէն՝ այսօր իրանց միակ կերակրողը դիակը ստացան... Պէտք է խեղճ որբերին չուտափոխթօգնութիւն հասցնելը։

ՂՈՒՐԱՅԻՑ մեզ գրում են. «Պ. Դրամպովի նամակը իր անմիտ բովանդակութեամբ եւ Մշակին՝ խմբագրի հասցէին ուղղված սպառնալիքներով՝ զայրոյթ պատճառեց այստեղի ընթերցողներին»։

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են. «Այգիները եւ դաշտի աշխատանքը վաղուց արդէն սկսվել է, բայց եղանակը անցնում է շատ չորային։ Եթէ այսպէս շարունակվի, վստահ կարելի է ասել, որ երկրի բերքը մեր կողմերում այս տարի էլ պակաս կը լինի, ուրեմն եւ թանգութիւն կը լինի»։

ԲԱՆԱՆԸ գիւղից մեզ գրում են. «Նորբերս Գանձակի գաւառի երկրորդ մասի պրիստով Եւստաֆիեի՝ Դարբաբեկով թուրքացու գիւղում բռնեց վերջին տարիներս մեր գաւառում յայտնի դարձած աւազակ Մուսա Նադիրօղլուն։ Նրա յանցանքների թուով նշանաւոր են բանանցեցի Բադալ Բադալեանի ու Կարապետ Սադանեանի սպանութիւնները։ Նրկորդի սպանութիւնը բնորոշ է նրանով, որ նա (Սադանեանը) հանդիսանում էր առաջին սպանութեան վկայ, ճարպիկ աւազակը քնդակի մի հարուստով վերջ է տալիս վկայի կեանքին, յոյս ունենալով՝ այդպիսով ազատվել որ եւ է պատասխանատուութիւնից։ Քննութիւնը կատարվում է եռանդով, յոյս կայ, որ արիւնարբու աւազակը անպատիժ չի մնայ»։

ԵՐԵՎԱՆԻՑ մեզ գրում են. «Մարտի 9-ին Երեւանի նահանգական դատարանում քննվեց ուսումնարանական վարչութեան կողմից գրաւված Կարսի եկեղեցական կալուածքների հարցը։ Վճիռը թողնվեց յայտնելու մարտի 13-ին։ Մանրամասնութիւնները իր ժամանակին կը հաղորդենք»։

ԱՍԽԱՐԱԳԻՑ մեզ գրում են. «Թղթախաղութիւնը տեղիս հայերի մէջ կատարեալ ախտ է դարձել։ Ունենք մի ժողովարան, որը ծառայում է գլխաւորապէս մի քանի մշտական անդամ յաճախորդներին, որոնք յատկապէս գնում են գրեթե բոլոր թղթախաղով լուսանցեւու համար։ Սակայն աւելի ցաւալի իրողութիւնը այն է, որ մեր մշակ դասակարգն անգամ զերծ չէ այդ ախտից։ Շուշեցիներն թաղում դուք միշտ կը հանդիպէք մի խումբ մշակներին (որոնց օրական աշխատանքն է 40—50 կօպէկ), որոնք բան ու գործերը թողած, թղթախաղով են պարապում, վերջացնելով խաղը սովորաբար ընտիր հայտնանքներով եւ յաճախ տուր ու դմբոցներով»։

ՂՈՒՐԱՅԻՑ մեզ գրում են. «Զուլուլ գիւղում Քեօռ-Գիւլ-Ալի-օղլուն հաւանում է իր գիւղից Հաֆիզ-Ալի-սան-դըզուն եւ նշան է դնում հետը, բայց աղջիկը հաւանում է իր մի այլ գիւղացու՝ Շիւխ-Սաադի։ Վերի-սան-օղլուն եւ նրան ընտրում է փեսացու։ Նշանը առաջինից յետ եւ տալիս եւ ընդունում են նշան երկրորդից։ Ոստի Քեօռը յիշ պահում է օրընտում եւ մի օր, անցնել տարվայ մայիսի 2-ին, դարանաւում եղած գիւղի դարմանանոցներից մէկում, հրացանով խփում է իր բաղդաւոր մրցորդին, երբ նա դրանելիս է լինում իրանց գիւղի տանուէրի հետ։ Գնդակը դիպչում է նրա ծոծրակին եւ դուրս է գալիս կզակից։ Խեղճի ծնօտի աջ մասը կախ ընկած, երկայնացած է մնում, ղէմը այլանդակված է։ Նա առողջանում է, ծախսելով իր վէրքի վրա հարսանիքի համար պատրաստած փողերը։ Բագ-էի նահանգական դատարանի բաժանունընում, որ եկել էր այստեղ, այդ գործի քննութիւնը նշանակված էր մարտի 6-ին։ Վկաների թուով կանչված էր եւ գործի հերոսուհին՝ Հաֆիզը։ Նա վայելուչ հասակ ունի եւ գեղեցիկ ղէմը։ Ազատում է այդ գործի եղելութիւնը սկզբից։ Քեօռը նայում է զմայլված Հաֆիզի վրա եւ հառաչում։ Մեղադրողին պատգամում էր դատարանի կողմից նշանակված Մ. Սալամէ-զեան։ Դատարանները, երկար խորհրդակցելուց յետոյ՝ դատապարտեցին Քեօռ-Գիւլ-Ալի-օղլուն տաժանակիր աշխատանքների փոխանակ, ինչպէս

պահանջում էր պրիստորը, կալանաւորութեան չորս տարի ժամանակով»։

ԱՍԽԱՐԱԳԻՑ մեզ գրում են. «Մարտի սկզբում տեղիս մի քանի երիտասարդները որոշել էին մի ներկայացում տալ անբերրութիւնից ձեւաված գիւղացիների օգտին, սակայն 350 հայ ընտանիք ունեցող Ասխարադում չը գտնվեց գտնէ մի կին, որ մասնակցէր ներկայացմանը եւ դրա պատճառով գործը գլուխ չէ գալիս Խակապէս Նկատողութեան արժանի է այն հանգամանքը, որ մեղանում տիկիները ընդհանրապէս զբաղված են լինում միմեայն բամբասանքներով»։

ԲԱՆԱՆԸ մեզ ուղարկված է տպելու հետեւեալը. «Մշակին» մէջ կարգադրեց Լեւոնային ճեմարանի ուսանող Բազրատ Բաղդասարովի՝ Դրամպովի՝ ուսուցիչ լեզուով գրած սպանաթիւքը եւ ամենեւին չը զարմացանք, որովհետեւ Դրամպովիները մեր այժմեան ուսանողութեան մէջ եղակի երեւոյթներ չեն։ Վաղուց է որ Լեւոնային եւ այլ տեխնիքական ճեմարանները մեզ համար այդպիսի «բաջարի» ասպետներ են արտադրում։ Դրանք մինչեւ այժմ հասարակութեան մէջ մտնում էին ին տեխնիքի տաւանան տակ, չը նայած, որ միանգամայն անարդարութիւն եւ զրպարտութիւն էր այդ մարդկանց ինտելիգենտ անունը տալ։ Այժմ պ. Դրամպովը գալիս է մեզ աւետելու, որ հետո չէ նսեւ այն ժամանակը, երբ մենք կունենանք տնայրոյց, դիպլոմաւոր Մեծ-Բուռնցիներին մի կատարեալ հրոսակախումբ։ Մայրենի լեզուով երկու խօսք արտայայտելու կարողութիւնից զուրկ Դրամպովը, սակայն, մի առաւելութիւն ունի իր՝ նմանապէս մայրենի լեզուն արհամարհող, մայրենի լրագրին ու գրականութիւնը աղքատ եւ անպէտք յայտարարող ընկերներից։ Ընկերակիցներից։ Սեփական ձեռքով պոկել իր դիմակը եւ իսկական կերպարանքով կանգնել հասարակութեան առաջ—անա այն «ասպետութիւնը», որը պակասում է այդպիսի դիպլոմաւորներից շատերին»։

ՂԱՂԱՐԻՑ մեզ գրում են. «Առհասարակ մեծպատի ընթացքում ընդունված է քարոզաւելու Բայց մենք ոչ մի խօսք տեղիս քահանաներից մինչեւ այժմ չենք լսել եւ, ինչպէս երեւում է, չենք էլ լսելու։ Վարդանանց տօնն էլ այստեղ կատարվեց շատ անշուք կերպով։ Մի հասարակ սովորական տօն։ Մեր քահանաները ոչ մի խօսք չասացին, ոչ մի յիշողութիւն չարին այդ տօնի մասին։ Գտնէ Վարդանանց պատմութեան համաժողով նկարագիրը տալիս ժողովրդին, որը մեծ բազմութեամբ հաւաքվել էր եկեղեցու մօտ։ Կատաճառով եւ զուրկ եկաւ անտեղից տխուր արամադրված»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԻՔԻՍ ԵՒ ՌՈՒՍՍԻԱՆ

«Իկհաթ» լրագրում տպվեց «Թիւրքիա եւ Ռուսաստան» վերնագրով մի ընդարձակ յօդուած, որի մէջ զովաբանվում է Ռուսաստանի խաղաղասէր քաղաքականութիւնը եւ նրա «օրինական եւ բարեացակամ» վերաբերմունքը դէպի Թիւրքիան։ Լրագիրն ասում է. «Մեզ համար վերին աստիճանի ուրախակի է լսել ուսուցչ արտաքին գործերի մինիստրի Պետեր-բուրգի մեր դեսպանին ասած այն խօսքերը, թէ ուսուցչ կառավարութիւնը, որքան կախված է իրանից, չի թող տալ, որ խաղաղութիւնը խախտվի Բալկանեան թերակղզու վրա եւ ամեն ջանք գործ կը դնէ առանձնացնելու եւ չեղարկելու մակերեսական շարժումը եւ այլն։ Ապա «Իկհաթ» չերմ խօսքերով արտայայտում է Թիւրքիայի երախտագիտութիւնը դէպի Տէր հանգուցեալ Կայսր Ալէքսանդր III-ի յիշատակը, որը իր գործը ձեռքով արգելեց զրից բարդութիւններին հայկական խառնակութիւնները ժամանակ եւ պատկառանքով ընդգծում է Հաագայում աշխարհի աւետված թագաւոր Կայսր Նիկօլայ II-ի խաղաղասիրութիւնը, Որի թագաւորութեան ժամանակ Թիւրքիան կարող է վստահութեամբ նայել իր ապագայի վրա եւ հանգիստ կերպով զարգանալ։ Լրագիրը գովում է ուսուցչ մամուլի խոհեմութիւնը եւ տակտը, որն անտարբերութեամբ է վերաբերվում Մակեդոնիայում տեղի ունեցած անցքերին եւ ոչնչով չէ խախտւում մակեդոնական ապստամբներին»։

Երիտասարդ Թիւրքերի օրգան «Մեշքերէթ» հետեւեալ խօսքերով է պատասխանում «Իկհաթին» այդ ասածներին. «Զօրեղ Ռուսաստանի

խաղաղասիրութիւնը, մանաւանդ վերջին երկու Միապետների ժամանակ, մի փաստ է, որ ենթակալ չէ որ եւ է կասկածի։ Այդ խաղաղասիրութիւնը մանաւանդ աւելի էլ արժանի է զարմանքի, որ Ռուսաստանը, ի նկատի ունենալով իր ոյժը, ոչ ոքից եւ ոչնչից վախենալու առիթ չունի, այնպէս որ այդ խաղաղասիրութիւնը ոչ թէ առերես է, այլ անկեղծ։ Բոլոր օսմանցները յիշում են, թէ ինչպէս հայկական խառնակութիւնների ժամանակ Դարբանէլի մօտ կանգնած անգլիական նաւատորմը, վախենալով Ռուսաստանից, չը համարձակվեց ռաբակով ջրանցքը եւ դրաւել Կ. Պօլսը։ Ոչ մի Թիւրք չէ կարող կասկածով վերաբերվել կոմս Լամպորֆի ասածներին դեսպան Հունիւր-փաշային։ Թող թող տրվի հարցնել Ռուսաստանի եւ նրա քաղաքականութեան ոգեւորված շատագովին Թիւրքիան ինչով երախտագարտ եղաւ Ռուսաստանին նրա բոլոր բարեբարութիւնների համար։ Արդեօք նրանով, որ սերտ բարեկամութիւն հաստատեց Գերմանիայի հետ։ Արդեօք նրանով, որ նոյն Գերմանիայի օգնութեամբ շտապով ղինաւորեց իր ամբողջ զօրքը եւ նաւատորմը։ Արդեօք նրանով, որ ֆանաթիկոսացիք առիական մահմեդականներին եւ կողմնակի կերպով ներշնչեց նրանց մէջ համիւլամական գաղափարը իր մեծահոգի հարեւանի դէմ։ Արդեօք նրանով, որ կոտորածի ենթարկեց 300,000 հայ-քրիստոնեաներին։ Մեզ զարմացնում է սուլթանի կառավարութեան այն համարձակութիւնը, որով նա այդպիսի հանգամանքներում զիմում է Պետերբուրգը՝ միջնորդելով բարդութիւնների առաջն առնել Բալկանեան թերակղզու վրա։ Արդեօք Արդու-Հա-միդը չէ կամենում կրկին այնպիսի մի խաղաղ, որպիսին նա այնպէս ճարպիկ կերպով խաղաց հայկական խառնակութիւնների ժամանակ։ Արդեօք չէ ուզում նա Ռուսաստանի բարեհաւանական բարեհաճութիւնը ստանալ, որպէս զի յետոյ այնպէս վարվի քրիստոնեաների հետ, ինչպէս իր քեֆը կը տալ Իլդիզ-Գիւս-կի ղեկավարների կարծիքով, բարի խորհուրդ եւ անկեղծ աջակցութիւն կարելի է սպասել միայն Բերլինից։ Ինչու որ մենք ներկայ դէպքում չեն զիմում այնտեղ, այլ մաշում են ուսուցչ արտաքին գործերի մինիստրութեան չէմբուր։ Ուր է այստեղ հետեւողականութիւնը։ Ինչ վերաբերում է ուսուցչ մամուլի «ապակին» եւ խոհեմութեան, աւելորդ չէր լինի, որ Ստամբուլի մամուլը օրինակ իրենցէր նրանից եւ հարց տար իրան, թէ ինքն Ստամբուլի մամուլը ինչպէս կը վերաբերվէր, օրինակի համար, անընկղկապեան թուրքերի առանց պատճառի խմբական ձերբակալութիւններին եւ կոտորածներին։ Արդեօք նա անտարբեր հանդիսատեսի միմար կը տնջ կը տնջ այն տակով եւ խոհեմութիւնը, որոնք այժմ զովաբանվում են ուսուցչ մամուլի մէջ Մակեդոնիայի անցքերի վերաբերմամբ։ Զէ որ մեր հաւատակիցները կովկասում մի գլուխ կողապտում, սպանում եւ այրում են։ Զէ որ ուսուցչ չեն կալանաւորում յանցանքների մէջ չը մասնակցողներին եւ տանջանքներին չեն ենթարկում անմեղներին։ Թող խելք տալ Ալլահը եւ Արդու-Համիդ-խանի կառավարութեանը պատժելով մեղաւորներին, խնայել անմեղներին»։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Рыс. Вѣд.» լրագրի թղթակիցը գրում է Բերլինից. «Մի քանի ամսից յետոյ Բերլինում կը տօնեն Գերմանիայի պարծանքը կազմող ամենանշանաւոր մարդկանցից մէկի՝ Րուզօլֆ Վիրիովի ծննդեան 80-ամեայ տարեդարձը։ Րուզօլֆ Վիրիով իր հայրենակիցների համար ոչ միայն մեծ դիմանկան է, այլ եւ քաղաքացի, որը պետական կանքի ամենագլուխ րօպէնեւրում միշտ աղււթութեամբ կատարել է իր պարտքը եւ արդարութեամբ ծառայել է Բերլինին եւ ամբողջ Գերմանիային։ Մինչեւ այսօր նա բաց չէ թողնում Բերլինի քաղաքային խորհրդի նիստերից եւ ոչ մէկը, աշխատելով է մասնաժողովներում եւ պրոեսական պատգամաւորների ժողովի հաղագիւտ նիստում գլուք չեց տնին ձայնակողմնաների նստարանի վրա այդ՝ այստեղ համարեալ ամեն մի երեւոյթի ծանօթ մտածողի դէմքը, որ կենտրոնացած ուշադրութեամբ լսում է վիճաբանութիւնները։ Ինքը Վիրիով այժմ շատ չէ մասնակցում վիճաբանութիւններին, թողնելով ազատամիտ կուսակցութեան հայեացքների պաշտպանութիւնը աւելի երիտասարդ ընկերներին, որոնք թէ թողնեն աւելի ուժեղ են եւ թէ ձայնը լսելի է պարլամենտի նոր շինութեան ընդարձակ դահլիճում։ Նա արդէն բաւական պատրաստվել է իր կեանքում հին շինութեան մէջ, այն ժամանակ հակառակորդներն էլ ուրիշ էին, որոնք հետ արժէր չափել ոյժերը։ Մերոնքները զեռ յիշում են, թէ ինչպէս կատարեցնում էին Բիւ-մարկին Վիրիովի ճառերը եւ թէ ինչպէս մի

ընդհարումից յետոյ պարլամենտում երկաթեայ կանցլեր մենամարտի հրաւեր ուղարկեց նաւաւոր պրօֆէսորին։ Այն հազաւորեւ ղէպերում, երբ այժմ Վիրիով խօսք է խնդրում, դահլիճում տիրում է խորին լռութիւն, այնպէս որ նոյն իսկ այդպիսի ընդարձակ դահլիճում լսվում է համարեա նրա ամեն մի խօսքը։ Դէմքերի վրա երեւում է յարգանքի եւ անկեղծ զարմանքի արտայայտութիւն դէպի այդ հազաւորեւ ծերունին, որի արմատական գաղափարները ներում են մինչեւ անգամ պրոեսական ինկէրները։ Իսկ երբ Վիրիով խօսում է այնպիսի նիւթի մասին, որ քաղաքականութեան չէ վերաբերում, ինչպէս այսօրվայ նիստում, դահլիճում այլ եւս չը կայ կուսակցութիւն։ Մեր առաջ այդ դէպքերում մի թարան է, որ լսում է սիրած ուսուցչին, լինեն լռողները մինիստրների, պատգամաւորների, թէ պահպանողականներ կամ ազատամիտներ»։

«Times» լրագրում տպագրված է հետեւեալ հեռագիրը Պեկինից. «Ձինական աստիճանաւորները յայտնում են, որ նրանք Պետերբուրգից ստացել են տեղեկութիւն, թէ Ռուսաստանը հրաժարվում է իր պահանջներից Մոնցօիայի եւ Թուրքեստանի վերաբերմամբ եւ համաձայնվում է մի քանի փոփոխութիւններ մտցնել, որոնք կը թուլացնեն նրա կոնտրոլի խտութիւնը։ Մանջուրիայի քաղաքացիական վարչութեան վրա։ Բացի դրանից Ռուսաստանը համաձայն է հրատարակել համաձայնութիւնը, հէնց որ նա ստորագրի Պետերբուրգում։ Այս տեղեկութեան մասին «Berliner Tageblatt» լրագրի Լօնդօնի թղթակիցը հետեւեալ դատողութիւնն է յայտնում. «Եթէ «Times»-ի հաղորդած լուրը, թէ Ռուսաստանը հրաժարվում է բացառիկ իրաւունքների պահանջից Մոնցօիայի եւ Թուրքեստանի վերաբերմամբ եւ սահմանափակում է իր կօնտրոլը Մանջուրիայի քաղաքացիական վարչութեան մասին, ուղիղ է, այն ժամանակ, յամենայն դէպս, մի նշանաւոր քայլ արված է ուսուցչ ձգտումներին զիմարդկու գործում։ Ձինացիները պէտք է համոզվեն, որ միջազգային կօնցերտը ղեւ եւս բաւականաչափ ուժեղ է, որպէս զի կարողանայ թող չը տալ պետութիւններից որ եւ է մէկին խախտել քաղաքական հաւասարակշիւութիւնը հեռաւոր Արեւելքում»։

«Ռէյտերի գործակալութեան» հեռագրում են Վաշինգտոնից. «Դատելով այն տեղեկութիւնների հիման վրա, որոնք ստացված են այստեղ, Ռուսաստանի զիմարդ մանջուրական հարցում առերես է միայն Առաջին անգամից այնպէս է երեւում, թէ իբր Ռուսաստանը վերադարձնում է Մանջուրիան Ձինաստանին, բայց այդ վերադարձը նա դրել է այնպիսի պայմաններին մէջ, որոնք իսկպպէս հաստատում են Ռուսաստանի գերիշխանութիւնը Մանջուրիայի վրա»։

«Պեկինից հեռագրում են «Times» լրագրին. «Երեսպանների ժողովում նորից քննվում էր դաւառական աստիճանաւորներին պատժելու հարցը։ Ռուսաց դեսպանը ամենակարգաւ կերպով հակառակվեց մահման նոր պատիժների պահանջին եւ ասաց, թէ աւելի շուտ թող կը տալ, որ կտրեն իր աջ ձեռքը, քան կը ստորագրէ այդպիսի դատաւճիռ»։

ՄՇԱԿԻ՝ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍՍԻԱ ԳՈՐԾԱՎԱԼՈՒԹԻՒՆԻՑ

13 մարտի

ԲԵՐԼԻՆ. «Norrddeutsche Zeitung» լրագիրը ապացուցանում է, որ Իտալիան երեւոյթեան դաշնակցութեան վերաբերեալ դաշնագրով պարտաւորութիւն չէ յանձն առել իր զօրքերը դնել դաշնակիցների տրամադրութեան տակ, որ իտալական զօրքի եւ նաւատորմի չափը կախում չունի դաշնակցութիւնից եւ որ դաշնակիցներից իւրաքանչիւրը կարող է, ըստ ցանկութեան, պակասեցնել եւ մեծացնել իր ոյժերը։ Իտալիայի ֆինանսական դժուարութիւնները նոյնպէս կախված չեն դաշնակցութեան առաջ ունեցած պարտաւորութիւններից, որովհետեւ այդպիսի պարտաւորութիւններ գոյութիւն չունեն։

ԲԵՐԼԻՆ. Ձինական վարձատրութեան վերաբերեալ հարցը քննելու համար Լօնդօն է ուղարկված զաղթականական բաժնի դիրեկտոր Շարլբլէ։ Նրան է նոյնպէս յանձնված կարգադրել Անգլիայի հետ գերմանացիներին վարձատրելու հարցը հարաւային Աֆրիկայում։

Պեկին, Դեսպանները չեն կարողանում համաձայնութիւն կայացնել դեսպանական թաղի ոստիկանութեան վերաբերմամբ։ Անգլիական եւ ամերիկական ներկայացուցիչները պնդում են, մեծամասնութեան հակառակ, որ ոստիկանութիւնը բաղադրւած չը լինի զինուորներից եւ չը գտնվի զօրքի օֆիցերների հրամանատարութեան տակ, որովհետեւ դրանց կարող են յետ կանչել հարկաւոր րօպէին։ Շատերը վիճում են դեսպանական թաղը ամբողջելու դէմ, վախենալով, որ դրանից կը վնասվեն չինացիների հետ ունեցած յարաբերութիւնները, եւ խոր-

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27